

**ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՄԻՋԳԵՐԱՏԵՍՉԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՔՈՎԻԴ-19  
ՀԱՄԱՎԱՐԱԿԻ ԱՌԱՋԱՑՐԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ ԴԻՄԱԿԱՅՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ**

Քովիդ-19 (կորոնավիրուս) համավարակը սկիզբ առավ 2019թ. նոյեմբերին Չինաստանի Ուհան քաղաքում, որը մի քանի ամիս անց տարածվեց աշխարհով մեկ: 2020թ. մարտի 13-ին Առողջապահության համաշխարհային կազմակերպությունը աշխարհում հայտարարեց կորոնավիրուսի համավարակ<sup>1</sup>: Համաշխարհային այս նոր իրականությունը ստիպեց կառավարություններին վերակազմակերպել գործունեությունը՝ նաև կենտրոնանալու համավարակի պատճառով առաջացած խնդիրների լուծման վրա:

Կորոնավիրուսի հետևանքով առաջացած մարտահրավերներին արձագանքման նպատակով՝ տարատեսակ ինստիտուցիոնալ մեխանիզմներ ստեղծվեցին՝ հաշվի առնելով տեղական մի շարք յուրահատկություններ, որոնցից են որոշումների կայացման մեխանիզմները և մշակույթը, ոլորտային ռազմավարական առաջնահերթությունները, տվյալների հավաքագրման, փոխանակման ու դրանց արագ արձագանքման պրակտիկաները, խնդիրների քննարկման և լուծման գոյություն ունեցող հարթակները, հանրային իրազեկման պրակտիկաները և այլն:

Դեռ 2020թ. հունվարին ՀՀ վարչապետի որոշմամբ Հայաստանում ստեղծվեց միջգերատեսչական հանձնաժողով՝ կորոնավիրուսի տարածումը կանխարգելող աշխատանքների համակարգման նպատակով<sup>2</sup>, որը զբաղվում էր իրավիճակի մոնիտորինգով, կորոնավիրուսի թեստերի ձեռքբերմամբ, կասկածելի դեպքերի թեստավորմամբ և այլն: Հայաստանում կորոնավիրուսի առաջին դեպքը գրանցվեց 2020թ. մարտի 1-ին: Կառավարության որոշմամբ՝ 2020թ. մարտի 16-ին հայտարարվեց արտակարգ դրություն<sup>3</sup> մեկ ամիս ժամկետով, ինչը հետագայում երկարաձգվեց:

Վերոնշյալ որոշմամբ՝ արտակարգ դրության իրավական ռեժիմն ապահովող ուժերի և միջոցների միասնական ղեկավարումն իրականացնելու նպատակով ստեղծվեց պարետատուն: Պարետատան ղեկավարման համար պարետ նշականվեց Հայաստանի Հանրապետության այդ ժամանակվա փոխվարչապետ Տիգրան Ավինյանը:

Պարետատան կազմում ի պաշտոնե ընդգրկվեցին արտակարգ իրավիճակների նախարարը, առողջապահության նախարարը, էկոնոմիկայի նախարարը, տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարը, պետական եկամուտների կոմիտեի ղեկավարը,

<sup>1</sup> ԱԲՀ որոշումը կորոնավիրուսը համավարակ հռչակելու մասին <https://www.who.int/director-general/speeches/detail/who-director-general-s-opening-remarks-at-the-media-briefing-on-covid-19---11-march-2020>

<sup>2</sup> ՀՀ վարչապետի որոշում, 30 Հունվարի 2020, 93 -Ա, Միջգերատեսչական հանձնաժողով ստեղծելու և դրա անհատական կազմը հաստատելու մասին <https://www.e-gov.am/decrees/item/21724/>

<sup>3</sup> ՀՀ կառավարության որոշում, 16 մարտի 2020 թվականի N 298-Ն, Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հաստատելու մասին <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=140212>

ուստիկանության պետը, ազգային անվտանգության ծառայության տնօրենը, վարչապետի աշխատակազմի ղեկավարի տեղակալը, վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների համակարգման գրասենյակի ղեկավարը, առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարը և սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավարը: Նույն որոշման հավելվածով նաև սահմանվեցին իրավունքների և ազատությունների ժամանակավոր սահմանափակումները և արտակարգ դրության իրավական ռեժիմն ապահովող միջոցները:

Այս վերլուծության նպատակն է վեր հանել, թե ՀՀ կառավարությունը կորոնավիրուսային հիվանդությանը դիմակայելու նպատակով ինչպես է կազմակերպել միջգերատեսչական համագործակցությունը, մասնավորապես ինչպես են քննարկվել, պլանավորվել և կայացվել որոշումները, ինչպես է իրականացվել միջգերատեսչական հաղորդակցությունը և տվյալների փոխանակումը, ինչպիսին են եղել իրավական ակտերի և իրականացված ծրագրերի վերահսկողության, մոնիտորինգի և գնահատման պրակտիկաները:

Ուսումնասիրությունը իրականացվել է իրավական փաստաթղթերի դիտարկմամբ և անհատական խորը հարցազրույցներով: Խորը անհատական հարցազրույցներ են անցկացվել ՀՀ առողջապահության նախարար Արսեն Թորոսյանի, ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանի, ԱԺ պատգամավոր Հերիքնազ Տիգրանյանի, ՀՀ պարետի օգնական Վիկտորյա Այդինյանի, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի օգնական Մուշեղ Հովսեփյանի հետ, որոնք անմիջականորեն ներգրավված են եղել բարձր մակարդակում որոշումների կայացմանը և իրագործմանը:

Չորս հարցազրույցներ են անցկացվել տարբեր պետական գերատեսչությունների միջին օղակի աշխատակիցների հետ, որոնք անմիջականորեն իրականացրել են կորոնավիրուսին առնչվող կառավարության որոշումները, իսկ երկուական հարցազրույցներ են անցկացվել փորձագիտական համայնքի և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, որոնք համագործակցել են պետության հետ թեմայի շրջանակներում:

## **Ուսումնասիրության արդյունքները**

### *Իրավական հիմքերը*

- Հայաստանում կորոնավիրուսով պայմանավորված իրավիճակի կառավարումը հաստատվել է Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին ՀՀ Կառավարության 16 մարտի 2020 թվականի N 298-Ն

որոշումով<sup>4</sup>, արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին ՀՀ օրենքով<sup>5</sup>, ինչպես նաև պարետի որոշումներով<sup>6</sup>:

- Ազգային ժողովը շարունակաբար փոփոխություններ է կատարել մի շարք իրավական ակտերում՝ անդրադառնալով օրենսդրական թերի կարգավորումներին ու բացերին, որպեսզի պարետատան գործողություններն ու որոշումները ունենան իրավական հիմքեր: Մասնավորապես՝ Ազգային ժողովը իրավաչափության օրինականության հետ խնդիրը լուծելու համար փոփոխություն է կատարել նորմատիվ ակտերի մասին օրենքում<sup>7</sup>, սահմանելով պարետի որոշումը որպես իրավական ակտի տեսակ: Փոփոխություններ են կատարվել նաև աշխատանքային օրենսգրքում<sup>8</sup>, սանիտարահամաճարակային օրենքներում<sup>9</sup>, տեղաշարժման սահմանափակման մասին և այլ իրավական ակտերում:

### *Որոշումների կայացման սկզբունքը և փուլերը*

- Ժամանակային և մասնակցային առումով որոշումների կայացումը կարելի է բաժանել երեք մեծ փուլերի. ա) կոլեգիալ, որտեղ մասնակցել են կառավարության անդամները (2020թ մարտ-մայիս), բ) ՀՀ վարչապետի կողմից (2020թ հունիս - սեպտեմբերի 27), գ) հիմնականում առողջապահության նախարարության կողմից (2020թ սեպտեմբեր 27-մինչ օրս):
- Քովիդի սկզբնական շրջանում կառավարությունը որոշումները հիմնականում կայացրել է կոլեգիալ՝ ներառելով կառավարության անդամներին քննարկումների և քվեարկության ընթացքում: Մի քանի ամիս անց՝ քովիդի հետևանքով առաջացած ճգնաժամային իրավիճակը պահանջել է արագ լուծումներ, իսկ մասնակցային ձևաչափով որոշումների կայացումը պահանջել է շատ ավելի ժամանակ, քան կար դրա հնարավորությունը և իշխող քաղաքական թիմը եկել է այն համոզման, որ բոլոր հրամանները և համակարգումը պետք է լինեն մեկ կետից՝ վարչապետի կողմից:
- 2020թ հունիսից որոշումների կայացման համակարգը փոխվել է: Որոշումները սկսել են կայացվել հիմնականում վարչապետի կամ փոխվարչապետերի կողմից: Դրա պատճառներից է եղել նաև այն, որ նախարարները չեն կարողացել հրահանգներ տալ

---

<sup>4</sup> ՀՀ կառավարության 16 մարտի 2020 թվականի N 298-Ն որոշումը Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հաստատելու մասին [https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=145261&fbclid=IwAR0jfa6XnRRwRCA4kwNfcVzHg1X2QdxEvoW8\\_ORRG8E4L7dPLxqW8lUFU](https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=145261&fbclid=IwAR0jfa6XnRRwRCA4kwNfcVzHg1X2QdxEvoW8_ORRG8E4L7dPLxqW8lUFU)

<sup>5</sup> ՀՀ օրենքը արտակարգ դրության իրավական ռեժիմի մասին <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=142153>

<sup>6</sup> ՀՀ պարետի որոշումները <https://www.gov.am/am/commandant-decisions/>

<sup>7</sup> ՀՀ օրենքը նորմատիվ իրավակա ակտերի մասին <https://www.arlis.am/documentview.aspx?docid=120733>

<sup>8</sup> ՀՀ աշխատանքային օրենսգիրք <https://www.arlis.am/documentview.aspx?docid=17>

<sup>9</sup> ՀՀ օրենքը բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին <https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=120876>

իրենց հավասար այլ գերատեսչություններին. օրինակ՝ առողջապահության նախարարը ուստիկանության պետին, կամ ԱԱԾ պետին և այլն:

- Հարցազրույցների մասնակիցները նշում են, որ թեև Կառավարությունում քննարկումները եղել են բավարար ներառական, սակայն պետական գետատեսչությունները միշտ չէ որ մասնակցել են որոշումների կայացման ընթացքին: Վերոնշյալ երկրորդ փուլից սկսած՝ արդեն կառավարության որոշման նախագծերը կառավարության անդամների հաստատման համար հիմնականում ուղարկվել են գրավոր ընթացակարգով, ինչը ենթադրում էր, որ շատ դեպքերում քննարկումները տեղի չէին ունենում: Նախագիծը մշակվում էր պարետատանը կամ վարչապետի աշխատակազմի կողմից, այնուհետև ուղարկվում նախարարություններ՝ նախարարների գրավոր քվեարկության համար:
- 2020թ սեպտեմբերի 27-ից՝ Ադրբեջանի կողմից Արցախյան երկրորդ պատերազմը սկսելուց հետո միջգերատեսչական աշխատանքների համակարգման և որոշումների ընդունման հիմնական բեռը հիմնականում անցել է առողջապահության նախարարությանը, որը զուգահեռաբար զբաղվում էր նաև պատերազմական իրավիճակով պայմանավորված զարգացումներով և անհետաձգելի այլ բժշկական օգնությամբ: Այստեղ արդեն այլ պետական գերատեսչությունները ևս սկսել են կազմել իրենց ոլորտային քաղաքականությունները կորոնավիրուսային հիվանդության արդյունքում առաջացած խնդիրներին դիմակայելու համար:

### *Պարետատուն*

- Իրավական դաշտի հետազոտությունը և հարցազրույցները փաստում են, որ Պարետատան գործունեության ընթացակարգերի, գործընթացների և որոշումների կայացման մասով որևէ իրավակարգավորում կամ այլ գրավոր նկարագրություն գոյություն չի ունեցել նախքան կորոնավիրուսային հիվանդությունը: Հայաստանի Հանրապետությունը չի ունեցել ճգնաժամային կառավարման պլան, չեն եղել ճգնաժամային իրավիճակներում նախարարությունների պատասխանատվության ոլորտները, ստեղծվելիք ժամանակավոր մարմինները: Պարետատունը, իր գործունեության ընթացքում, փորձել է իրավական կարգավորումներ տալ որոշ հարցերի. օրինակ՝ սահմանել որոշումների ձևերը, միջոցառումները, որպեսզի դրանք հակաօրինական չհամարվեն:
- Պարետատունը կազմակերպում էր կորոնավիրուսին վերաբերող Կառավարության ողջ աշխատանքները՝ ձևավորում նիստի օրակարգ<sup>10</sup>, հրավիրում կառավարության նիստ, կայացված որոշումների հիման վրա մշակում պարետի որոշումներ, այն ուղարկում հանրային տեղեկատվական կենտրոն, հետևում հանրային իրազեկման գործընթացին և այլն: Պարետատունը, որը փոխվարչապետ Տիգրան Ավինյանի

<sup>10</sup> Կառավարության նիստերի օրակարգերը տես <https://www.e-gov.am/sessions/>

աշխատակազմն էր, մասնագիտացված մարմին չէր և չուներ խնդիրների հետ առնչվելու մասնագիտական ռեսուրսներ՝ մասնավորապես ճգնաժամային իրավիճակների կառավարման գիտելիք և փորձ, առողջապահական, կրթական, տնտեսական և սոցիալական հարցերի վերաբերյալ գիտելիք և դրանց հետ աշխատելու փորձառություն: Հետևաբար մասնագիտական հարցերում ներգրավվում էին վարչապետի աշխատակազմի<sup>11</sup> մասնագետները, պետական այլ գերատեսչությունների փորձագետներ, մասնավոր ոլորտի փորձագետներ, ինչը վկայում են հարցազրույցները:

- Սակայն հսկայական տեղեկատվական հոսքերի պատճառով իրավիճակը համակարգումից պարբերաբար դուրս եկավ, քանի որ կորոնավիրուսային հիվանդության ի հայտ գալուց մի քանի ամիս անց պարետատունն ու վարչապետի աշխատակազմը գերձանրաբեռնվածության պատճառով այլևս ի վիճակի չէին միմյանց հետ փոխանակվել տեղեկատվությամբ, դրան նպաստեց այն, որ չկային տեղեկատվության փոխանակման համար ստեղծված ինստիտուցիոնալ հարթակներ, իսկ ճգնաժամային իրավիճակում դրա ստեղծելը գրեթե անհնարին էր ժամանակի սղության պատճառով: Սա ի վերջո հանգեցրեց նրան, որ իրավիճակի կառավարումը երկու մասի բաժանվեց: Հատված ՀԿ ոլորտի ներկայացուցչի հետ հարցազրույցից. *«Պարետատան պետական, տեղական ոչ պետական և միջազգային գործընկերները միշտ չէ կարողանում էին կողմնորոշվել թե այդ երկուսից ում պետք է ուղարկել տեղեկատվությունը և կամ ով էր զբաղվում որևէ հարցի համակարգմամբ»:*

#### *Միջգերատեսչական համագործակցություն*

- Հարցազրույցները փաստում են, որ որոշ դեպքերում պարետատանը կայացված որոշումների նախագծերը պետական գերատեսչություններ չեն ուղարկվել մասնագիտական կարծիքի և դիտարկումների համար: Օրինակ՝ սոցիալական աջակցությանների ծրագրերի<sup>12</sup> տրամադրման համար որոշել և հայտարարել է պարտետատունը և ոչ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը: Ըստ փորձագիտական կարծիքի՝ կորոնավիրուսի հետևանքների ոչնչացմանն ուղղված ծրագրերի մասով պարետատան որոշումների կայացման վրա հիմնականում ազդել է հանրային կարծիքը և որոշ խմբերի ակտիվ դիրքորոշումը իրենց շահերի և իրավունքների պաշտպանության համար: Հատված փորձագիտական հարցազրույցից *«Օրինակ, երբ որևէ ոլորտի աշխատողներ կամ գործատուներ բողոքում էին, դրան հաջորդում էր կառավարության արագ արձագանքը այդ բողոքը մեղմելու նպատակով միջոցառումների տեսքով»:*

<sup>11</sup> ՀՀ վարչապետի աշխատակազմ <https://www.gov.am/am/staff-structure/>

<sup>12</sup> Կորոնավիրուսի սոցիալական հետևանքների չեզոքացման ծրագրեր <https://www.gov.am/am/covid-19-cragrer/>

- Հետազոտությանը մասնակցած տարբեր գերատեսչությունների աշխատակիցները նշում էին, որ կորոնավիրուսի հետևանքով առաջացած խնդիրների դիմակայմանն ուղղված պետական ծրագրերը հիմնականում չեն բխել մարդկանց կարիքներից. քանի որ դրանք կազմելու ընթացքում կարիքների բացահայտում և գնահատում չի կատարվել հատկապես սոցիալական ծրագրերի մասով: Հատված հարցազրույցից. *«Անարդարացի են համարել, որ պարետատունը կայացնում էր որոշումներ, որի պատասխանատվությունը սակայն անարդարացիորեն կրում էին նախարարությունները: Այսինքն որոշումը կայացվում էր մի տեղ և իրականացվում էր այլ տեղ: Ռեսուրսների անարդարացի բաշխման հանրային քննադատությունը և քաղաքական պատասխանատվությունը ստանում էր ոչ թե պարետը, այլ նախարարները և նախարարությունները»:*
- Հետազոտությանը մասնակցած բարձրաստիճան պաշտոնյաները նշում են, որ այնուամենայնիվ իրենք հիմնականում ներգրավված են մնացել առնվազն երկկողմանի կամ անհատական քննարկումների մակարդակում: Քննարկումները հատկապես մասնակցային և բուռն են ընթացել մի քանի հարցերի շուրջ՝ դասերի վերսկսում, ռեստորանների փակում կամ բացում, արտակարգ դրության և կարանտինի հետ կապված հարցեր: Հետաքրքրական է, որ երբեմն հարցազրույցների ընթացքում հակասություններ են ի հատ եկել բարձրաստիճան պաշտոնյաների և պետական գերատեսչություններում աշխատող մասնագետների պատասխաններում հատկապես կապված միջգերատեսչական համագործակցության մասով:
- Համայնքների փակման մասին որոշումները<sup>13</sup> հիմնականում իրականացնում էր պարետատունը: Այն տեղի էր ունենում հետևյալ կերպ. մարզպետը պարետին կամ պարետատուն էր հայտնում քաղաքի տվյալները, պարետատունը առողջապահության նախարարությունից ստուգում էր որոշ տվյալներ՝ վավերացնելու բռնկման իրական փաստը: Անհրաժեշտ տեղեկությունը ստանալուց հետո մեկ ժամվա ընթացքում պարետատունը պատրաստում էր համայնքի փակման մասին որոշումը, այն շրջանառում և հաստատումը ստանալուց հետո հանրայնացնում: Սակայն միշտ չէ, որ միջգերատեսչական համագործակցությունը հաջողվել է: Հատված հարցազրույցից. *«Որն է համայնք փակելու համար ռոտիկանությունը, էկոնոմիկայի նախարարությունը, տուրիզմի կոմիտեն և մարզպետարանները միշտ չէ որ աշխատել են միասին և համակարգված: Օրինակ՝ Էջմիածին քաղաքի փակման ժամանակ ռոտիկանությունը փակել է միայն Երևան գնացող ճանապարհը, ինչը սակայն Էջմիածնից դուրս եկող բազմաթիվ ճանապարհներից մեկն էր»:*
- Երբեմն հաղորդակցությունը ընթանում էր ուղիղ նախարարությունների միջև, առանց վարչապետի աշխատակազմի կամ պարետատան համակարգման, սակայն պատճեն

<sup>13</sup> Պարետի որոշումը Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Մարայիկ և Ձորակապ բնակավայրերում կիրառվող սահմանափակումների վերաբերյալ, տես <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=141699>

ուղարկվում էր պարետատուն՝ տեղեկացնելու տվյալ հարցի ընթացքի մասին: Հատված հարցազրույցից. *«Օրինակ ԿԳՄՄՆ նամակներ է ուղարկել է առցանց կրթության մատչելիության մասով, որպեսզի դասագրքերը հրապարկվեին էլեկտրոնային ձևաչափով և դրվեին կայքերում, կույրերի դպրոցի համար առաջարկվել են աուդիո գրքերը և այլն»:*

- Որոշ դժվարություններ են ի հայտ եկել այն պահից, երբ պարետատունը դադարել է գործել 2020թ սեպտեմբերի 11-ին<sup>14</sup>: Այս պահից սկսած իրավիճակը հիմնականում կարգավորվել է առողջապահության նախարարի որոշումներով: Իրավական տեսնակյունից մեծ թվով խնդիրներ են առաջացել, որովհետև քննարկումների ընթացքում յուրաքանչյուր գերատեսչություն առաջ էր տանում իր գերատեսչական շահը և դրա արդյունքում ավելի էր բարդանում միջգերատեսչական համագործակցությունը: Հատված հարցազրույցից. *«Այդ պատճառով էլ նվազեցին փոխազդեցության մեխանիզմները և սահմանափակվեցին երկխոսությունների ու քննարկումների հնարավորությունները»:*
- Փաստորեն միջգերատեսչական համագործակցությունը ընթացել է երկու հիմնական ձևաչափով՝ ուղիղ գերատեսչությունների միջև և միջնորդավորված՝ պարետատան միջոցով: Առաջին տարբերակն է գործել, եթե հարցը առնչվել է 2-3 պետական գերատեսչությունների, սակայն ավելի լայն շրջանակի համար համագործակցությունը ընթացել է պարետատան միջոցով: Թեև որոշում կայացնողները հիմնականում նախարարներն են եղել, սակայն հիմնական միմյանց կապող և աշխատող օղակը եղել են փոխնախարարները:
- Հարցազրույցներին մասնակցած բարձրաստիճան պաշտոնյաները, փորձագիտական համայնքը և ՀԿ համայնքի ներկայացուցիչները միակարծիք էին, որ միջգերատեսչական համագործակցության ամենահիմնական ձախողումը եղել է այն, որ կորոնավիրուսին առնչվող իրավական ակտերի կատարման վերահսկողությունը<sup>15</sup> պատշաճ չի կատարվել: Մի շարք որոշումների արդունավետությունը հենց նվազել է այն պատճառով, որ դրա հանդեպ վերահսկողական մեխանիզմները կամ բավարար չէին կամ բավարար արդյունավետ չէին իրականացվում: Հատված հարցազրույցից. *«Ժամանակ առ ժամանակ դիմակների կրման իրավիճակը լավանում էր, բայց դրա հետևողական պահպանումը խնդրահարույց էր»:* Վերահսկողության խնդիրների մասին են նաև վկայում այդ թեմայով փաստաթղթերի բացակայությունը:

<sup>14</sup> ՀՀ կառավարության որոշում, 11 սեպտեմբերի 2020 թվականի N 1514-Ն, Կորոնավիրուսային հիվանդությամբ պայմանավորված կարանտին սահմանելու մասին

<https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=145874>

<sup>15</sup> Պարետի որոշումներ <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=144836>,

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=144826>,

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=142972>

## *Տվյալների կառավարում*

- ՀՀ արտակարգ դրության մասին կառավարության որոշմամբ, ինչպես նաև Պարետի որոշմամբ<sup>16</sup> նախարարություններին հանձնարարվել է տվյալների հավաքագրում և անհրաժեշտության դեպքում փոխանակում: Ըստ հարցազրույցների, շատ տվյալներ, սակայն, այդպես էլ չեն կարողացել հավաքվել, քանի որ այն պահանջել է երկար ժամանակ, մասնագիտական կարողություններ ու կենտրոնացած աշխատանք, ինչի հնարավորությունը նախարարությունները հիմնականում չեն ունեցել և ավելի շատ աշխատել են մասնավորից ընդհանուր եզրակացության մեթոդաբանությամբ:
- Առողջապահության նախարարությունը ներկայացրել է հիվանդացության կամ մահացության տվյալների հավաքագրման մեթոդը, տարիքային խմբերը, սեռը, և այլ մանրամասներ՝ օգտագործելով ԱՐՄԵԴ ծրագիրը<sup>17</sup>, որ նախաքովիային ժամանակահատվածում օգտագործվել էր որպես վճարման համակարգ: ԿԳՄՄՆ մշակել էր տվյալների հավաքագրման իր սեփական ձևաչափերը, որտեղ շաբաթական պարբերականությամբ ստանում էր աշակերտների մասնակցության թիվը, հետազոտում էր եխսանների և ուսուցիչների շրջանում հիմնական սոցիալ-հոգեբանական խնդիրները և այլն:
- Պետական գերատեսչությունները տվյալների փոխանակումը իրականացրել են պարետատան ստեղծած հարթակներով, եղել են նաև այլ ձևաչափով. եղել է բոլոր հաստատություններին հասանելի միաժամանակ աշխատանքի հնարավորություն: Հատված հարցազրույցից. «*Պարետատան հարթակներով ԱԳՆ-ն ներկայացրել է այլ երկրների պրակտիկաները, ստուգումների արդյունքների մասին որոշ տվյալներ են ուղարկվել տարբեր գերատեսչություններ՝ ուստիկանությունը, տեսչական մարմինները և այլն*»:
- Հարցազրույցին մասնակցած բարձրաստիճան պաշտոնյաները վկայում են, որ տեղեկատվության փոխանակման համակարգված արդյունավետ ձևաչափ չի ստացվել ունենալ, ինչը կախված էր ոչ միայն հսկայածավալ տեղեկատվության անընդհատ հոսքից, այլ նաև գերատեսչությունների անպատրաստվածությունից: Պետական համակարգերը չեն կարողացել արագ արձագանքել ստեղծված խնդիրների հոսքին, քանի որ տվյալների կառավարման ձևավորված մեխանիզմներ չեն եղել, չեն եղել նաև հստակ համակարգված և միմյանց ճանաչող տվյալների պետական բազաներ, այլ աղբյուրներ ու հարթակներ, որոնցից հնարավոր կլինեք ստանալ տեղեկատվություն և ըստ այդմ կատարել ռիսկերի պատշաճ գնահատում և ռիսկերի կառավարում:

<sup>16</sup> Պարետի որոշում <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=145364>

<sup>17</sup> ԱՐՄԵԴ ծրագիր <https://www.armed.am/am/auth/loginnew>



## Եզրակացություն և առաջարկներ

- Այսպիսով՝ թեև Հայաստանին հաջողվել է չզնալ համակարգի ամբողջական ձախողման՝ համավարակը զուգահեռելով նաև պատերազմի հետ, այնուամենայնիվ միջգերատեսչական մակարդակում արդյունավետ համակարգում տեղի չի ունեցել: Դրա պատճառը մասամբ ինստիտուցիոնալ ընթացակարգերի բացակայությունն է և մասամբ ոչ արհեստավարժ աշխատակազմերը: Որոշումների կայացման պրակտիկաները եղել են հախուռն և ոչ ինստիտուցիոնալիզացված: Պետական գերատեսչությունները չեն կարողացել ըստ անհրաժեշտության տվյալների հավաքագրում և փոխանակում իրականացնել, իսկ միմյանց հետ քննարկումները և որոշումները կրել են հապճեպ և շատ նեղ թեմատիկ բնույթ:
- Ավելին՝ թեև Հայաստանը ճգնաժամային իրավիճակում միջգերատեսչական համագործակցության որոշակի փորձառություն է ձեռք բերել, երաշխիքներ չկան, որ նմանատիպ իրավիճակում կրկին հայտնվելու դեպքում համակարգը կկարողանա արդյունավետ աշխատել, քանի որ այդ պրակտիկաները դեռևս չեն ինստիտուցիոնալիզացվել:
- Կառավարությանը անհրաժեշտ է նախաձեռնել մի քանի հրատապ քայլեր, մասնավորապես՝
  - Ներդնել ռիսկերի գնահատման միջգերատեսչական մեխանիզմ
  - Ստեղծել ներքին հաղորդակցման և հաշվետվության հստակ օղակներ, որոնք անխափան կաշիսատեն նաև ճգնաժամային իրավիճակներում
  - Իրականացնել անհատական կարիքների գնահատում պետական աջակցության ծրագրերի համար և տրամադրել հասցեական աջակցություն
  - Ապահովել տվյալների հավաքագրման գործիքներ և միջգերատեսչական տվյալների բազաների փոխանակման հարթակներ
  - Փորձառության հիման վրա ստեղծել ճգնաժամային իրավիճակների կառավարման պլան
  - Միջգերատեսչական համագործակցության հարթակներում տարանջատել պատասխանատվության մանդատները
  - Փորձագիտական համայնքին, քաղաքացիական հասարակության և բիզնես սեկտորին ներգրավել աշխատանքներում
  - Ներդնել պետական քաղաքականության իրագործման նկատմամբ գործուն վերահսկողական մեխանիզմներ և ապահովել դրանց մշտադիտարկումն ու գնահատումը

---

Սույն հետազոտությունը հնարավոր է դարձել Բաց հասարակության հիմնադրամներ-  
Հայաստանի ամբողջական ֆինանսական օժանդակության շնորհիվ՝ հանրային  
քաղաքականության հետազոտությունների կրթայթոշակներ ծրագրի շրջանակներում:  
Ձեկույցում տեղ գտած վերլուծություններն արտահայտում են հեղինակ/ների տեսակետը և  
կարող են չհամընկնել Բաց հասարակության հիմնադրամներ - Հայաստանի դիրքորոշումների ու  
տեսակետների հետ:

Հեղինակ՝ Օլգա Ազատյան  
2022թ.